ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 325-25

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան 13 06 2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն, ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**ԱԼՏԵՐԷԳՈ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ժիրայր Մուշեղյանի, որի անունից 2025 թվականի հունիսի 5-ին տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Սարգիս Ղազարյանը (ՆՔՀ՝ 014869937, տրված 22.03.2023թ., 013-ի կողմից) (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի Պետական բյուջեի մասին» 2024 թվականի դեկտեմբերի 04-ի ՀՕ-471-Ն ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N1-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ սահմանված 1190 «Զբոսաշրջության զարգացման» ծրագրի 11002 «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» միջոցառմամբ նախատեսված գումարից 4,920,000 (չորս միլիոն ինը հարյուր քսան հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ) կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման միջազգային N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների (եռամսյակային, կիսամյակային տարեկան և այլ) արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9. Պայմանագրով նախատեսված միջոցառումների (եռամսյակային, կիսամյակային տարեկան և այլ) արդյունքները ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) և մնացորդը կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքներն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են և հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ

ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.mineconomy.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագիրը կազմված է 15 էջից:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե Հասցեն՝ 0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900011010379 ՀՎՀՀ 02698604 Գլխավոր քարտուղար՝ Հայկազ Նասիբյան	«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ Հասցեն՝ Ք.Երևան, Կոմիտաս 61, 31 «Ամերիաբանկ» ՓԲԸ h/h 1570025560800100 ՀՎՀՀ 00163343 Տնօրեն՝ Ժիրայր Մուշեղյան Լիազորված անձ՝ Սարգիս Ղազարյան (ՆՔՀ՝ 014869937, տրված 22.03.2023թ., 013-ի կողմից)
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1

2025 թ. 06 13 **-ին**

կնքված N 325-25 **պայմանագրի**

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	**«Զբոսաշրջության կրթության բարելավում.** **Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար»** **(դասընթաց(ներ))**	Ծրագիրը միտված է զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացմանը՝ միտված մարզերում արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար վերապատրաստմանը	Արկածային (լեռնային, սպորտային) զբոսաշրջության դասընթացի (կազմված առնվազն 1 խմբից) իրականացման համար նախատեսվում է. 1. մինչև 2 շաբաթ տևողությամբ դասընթաց 2.դասընթացի առնվազն 10 մասնակից 3. առնվազն 4 տեսական դաս, մեկ տեսական դասի տևողությունը՝ առնվազն 90 րոպե, 4. առնվազն 10 գործնական դաս, 5. ապահովել դասընթացի բովանդակությանը համապատասխան տվյալ մարզի կոնկրետ տեղանքում գիշերակաց(ներ), 6. ապահովել մասնակիցներին դասընթացին համապատասխան գույքով, 7.կազմել դասընթացի մանրամասն նկարագիր, 8. ապահովել դասընթացն իրականացնող անձնակազմ, 9. կազմել մասնակիցների ընտրության ցանկ (համաձայնեցնել Զբոսաշրջության կոմիտեի հետ), 10.ապահովել դասընթացի կազմակերպչական աշխատանքներն իրականացնող անձնակազմ՝ ըստ գործառույթների,	Զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառման իրականացում, մասնավորապես՝ - Առնվազն 1 դասընթաց, - առնվազն 10 որակյալ վերապատրաստված մասնագետ. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում: Արկածային (լեռնային, սպորտային) զբոսաշրջության դասընթացի (կազմված առնվազն 1 խմբից) իրականացման արդյունքները՝ 1. 10 օր տևողությամբ վերապատրաստման դասընթացի ապահովում, 2. դասընթացին առնվազն 10 մասնակցի ապահովում, 3. առնվազն 4 տեսական դասի ապահովում, մեկ տեսական դասի տևողությունը՝ առնվազն 90 րոպե, 4. առնվազն 10 գործնական դասի ապահովում, 5. դասընթացի բովանդակությանը համապատասխան տվյալ մարզի կոնկրետ տեղանքում գիշերակաց(ներ)ի ապահովում, 6. մասնակիցներին դասընթացին համապատասխան գույքով ապահովում, 7. դասընթացի մանրամասն նկարագրի ապահովում, 8. դասընթացն իրականացնող անձնակազմի ապահովում, 9. մասնակիցների ընտրության ցանկի ապահովում (համաձայնեցված Զբոսաշրջության կոմիտեի հետ),	2025թ. Հուլիս	Ըստ կատարման ընթացքի	4,920.0 (առանց ԱԱՀ)

			11.ապահովել դասընթացի իրականացման համար անհրաժեշտ միջավայր, գույք, պայմաններ (ըստ անհրաժեշտության համաձայնեցնել Հբոսաշրջության կոմիտեի հետ):	10. դասընթացի կազմակերպչական աշխատանքներն իրականացնող անձնակազմի ապահովում՝ ըստ գործառույթների, 11. դասընթացի իրականացման համար անհրաժեշտ միջավայրի, գույքի, պայմանների ապահովում (ըստ անհրաժեշտության համաձայնեցված Հբոսաշրջության կոմիտեի հետ):			
	Ընդամենը՝						*4,920.0*

Պետական մարմին
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Հբոսաշրջության կոմիտե
Հասցեն՝
0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հ/հ 900011010379
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
Հայկազ Նասիբյան

(ստորագրություն) Կ.Տ.

Կազմակերպություն
«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ

Հասցեն՝
Ք.Երևան, Կոմիտաս 61, 31
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570025560800100
ՀՎՀՀ 00163343

Տնօրեն՝
Ժիրայր Մուշեղյան
Լիազորված անձ՝
Սարգիս Ղազարյան
(ՆՔՀ՝ 01486993
տրված 22.03.2023թ. 013-ի կողմից)

(ստորագրություն)

Հավելված 2

2025 թ. 06 13 -ին

կնքված N 325-25 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3. Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

2.4. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2025 թ. 06 13 -ին
կնքված N 325-25 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծրագրի անվանումը՝ ***«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»***

ՀՀ հազար դրամ

Միջոցառման															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999/22	**«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»՝ «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ**	-	-	-	-	-	-	4,920.0	4,920.0	4,920.0	4,920.0	4,920.0	4,920.0	**4,920.0**

Պետական մարմին
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Զբոսաշրջության կոմիտե
Հասցեն՝
0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հ/հ 900011010379
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
Հայկազ Նասիբյան

(ստորագրություն)

Կազմակերպություն
«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ

Հասցեն՝
Ք.Երևան, Կոմիտաս 61, 31
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570025560800100
ՀՎՀՀ 00163343
Տնօրեն՝
Ժիրայր Մուշեղյան
Լիազորված անձ՝
Սարգիս Ղազարյան
(ՆՔՀ՝ 01486993՝
տրված 22.03.2023թ. 013-ի կողմից)

(ստորագրություն)

Հավելված 4

2025 թ. 06 13 -ին

կնքված N 325-25 պայմանագրի

Կազմակերպություն
«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ

Հասցեն՝
Ք.Երևան, Կոմիտաս 61, 31
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570025560800100
ՀՎՀՀ 00163343

Պետական մարմին
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Զբոսաշրջության կոմիտե
Հասցեն՝
0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
h/h 900011010379
ՀՎՀՀ 02698604

ԱԿՏ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 20 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված _____ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

NN	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 5

2025 թ. 06 13 -ին

կնքված N 325-25 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** ենթամիջոցառումը միտված է զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացմանը՝ միտված մարզերում արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար վերապատրաստմանը:

Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպության կողմից արկածային (լեռնային, սպորտային) զբոսաշրջության դասընթացի (կազմված առնվազն 1 խմբից) իրականացման համար նախատեսվում է.

1. մինչև 2 շաբաթ տևողությամբ դասընթաց,
2. դասընթացի առնվազն 10 մասնակից,
3. առնվազն 4 տեսական դաս, մեկ տեսական դասի տևողությունը՝ առնվազն 90 րոպե,
4. առնվազն 10 գործնական դաս,
5. դասընթացի բովանդակությանը համապատասխան տվյալ մարզի կոնկրետ տեղանքում գիշերակաց(ներ)ի ապահովում,
6. մասնակիցներին դասընթացին համապատասխան գույքով ապահովում,
7. դասընթացի մանրամասն նկարագրի կազմում,
8. դասընթացն իրականացնող անձնակազմի ապահովում,
9. մասնակիցների ընտրության ցանկի (համաձայնեցնելով Զբոսաշրջության կոմիտեի հետ) կազմում,
10. դասընթացի կազմակերպչական աշխատանքներն իրականացնող անձնակազմի՝ ըստ գործառույթների, ապահովում,
11. դասընթացի իրականացման համար անհրաժեշտ միջավայրի, գույքի, պայմանների ապահովում (ըստ անհրաժեշտության համաձայնեցված Զբոսաշրջության կոմիտեի հետ):

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
Զբոսաշրջության կոմիտե
Հասցեն՝
0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
h/h 900011010379
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
Հայկազ Նասիբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն

«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ

Հասցեն՝
Ք.Երևան, Կոմիտաս 61, 31
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570025560800100
ՀՎՀՀ 00163343

Տնօրեն՝
Ժիրայր Մուշեղյան
Լիազորված անձ՝
Սարգիս Ղազարյան
(ՆՔՀ՝ 014869937
տրված 22.03.2023թ. 013-ի կողմից)

(ստորագրություն)

Կ.Տ.